

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ 2018 թվականի գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերին՝ համաձայն հավելվածի, և դրանք սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

## ՑԱՆԿ

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

	Ծրագրի անվանումը	Կազմակերպության անվանումը	Ֆինանսավորման ծավալը/հազ. դրամ/
	<b>Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ</b>		<b>1668461.4</b>
		<b>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե- ընդամենը</b>	<b>135000.0</b>
1	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն» ծրագրին պետական աջակցություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	7000.0
2	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման հայեցակարգերի և ջրային ենթակառուցվածքների շահագործման տեղային կանոնակարգերի մշակում» ծրագրին պետական աջակցություն	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	15000.0
3	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի (Հայսմավուրքներ, Ճառընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայում ու գիտատեխնիկական մշակում» ծրագրին պետական աջակցություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ հիմնադրամ	18000.0

4	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	22000.0
5	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	8000.0
6	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Գալարմինի կիրառական նշանակությունը տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	10000.0
7	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայաստանի Հանրապետությունում արտադրված սննդամթերքում պեստիցիդների մնացորդների մոնիթորինգ» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	13000.0

8	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայկական գենոֆոնդի ուսումնասիրությունը և քարտեզագրումը» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	<p>10000.0</p>
9	<p>Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության «Սարքավորումների մետաղի վիճակի հսկման ակուստիկ էմիսիոն մեթոդի մշակման նպատակով փորձարարական հետազոտությունների իրականացում» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերություն</p>	<p>8000.0</p>
10	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կլիմայի փոփոխման և Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող լճային էկոհամակարգի և նրա կենսառեսուրսների կարիոլոգիական հետազոտում» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	<p>12000.0</p>
11	<p>Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայոց արքաների դամբարանների հետազոտում. II փուլ, շարունակական պեղումներ» ծրագրին պետական աջակցություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն</p>	<p>12000.0</p>

		<b>ՀՀ պաշտպանության նախարարություն</b>	<b>1533461.4</b>
12	«Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական պատվեր		1533461.4

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2018 թվականի գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերին  
հավանություն տալու

---

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1256-Ա «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի 44.1 կետի, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգի» 7-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման են ներկայացվում 11 գիտական ծրագրերի նախագծեր: Վերջիններս հավանության են արժանացել ՀՀ ԿԳ նախարարի 14.07.2017 թվականի N 776-Ա/2 հրամանով ստեղծված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և պետական նպատակային ծրագրերի նախագծերի քննարկման հանձնաժողովի կողմից (24.07.2017 թ. նիստի արձանագրությունը կցվում է):

Ցանկում բերված պետական նպատակային 11 ծրագրերի նախագծերից 7-ը գիտական կազմակերպությունների կողմից նախորդ տարիներին իրականացված ծրագրերի շարունակությունն են (ՀՀ ԿԳՆ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, 4-ը՝ 2017 թվականին ավարտվող ծրագրերի տրամաբանական շարունակությունն են («ՀՀ ԿԳՆ Երևանի պետական

համալսարան, ՀՀ ԿԳՆ «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, ՀՀ ԷԵԲՊՆ ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ, ՀՀ ՄՆ պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն):